ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 13.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/39

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 12.03.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 12.03.2018թ. ներկայացրել էր բողոք, որով հայտնել էր հետևյալը.

««Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ուսումնասիրելով «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված բաց մրցույթի թիվ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով Հրավերի /այսուհետ՝ Հրավեր/ մի շարք դրույթներ, բացահայտել է, որ դրանցում առկա են «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/ խախտումներ, որոնք հանգեցրել են Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

1.Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

Ծածկագիր՝ թիվ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1»

Գնման առարկա՝ «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերումը բաց մրցույթի ընթացակարգով գնում՝ մեկ չափաբաժնով:

Պատվիրատու «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» /հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 17/:

2.Վեճի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերն ու բողոքաբերի պահանջը.

«Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարվել է բաց մրցույթ թիվ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով (այսուհետ նաև' Ընթացակարգ), որի իրականացման համար սահմանված կարգով հաստատված Հրավերը, մասնավորապես՝ դրա տեխնիկական բնութագրի հատվածը, որում ներառված են մրցույթի մասնակիցների նկատմամբ առաջադրվող վավերապայմանները, հակասում է Օրենքի դրույթների պահանջներին և անուղղակիորեն հանգեցնում Ընկերության շահերի ոտնահարմանը:

Այսպես՝ համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք՝

1) նախատեսված չեն սույն հոդվածով.

2) խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին.

3)համարժեք չեն՝ ուղղակիորեն չեն բխում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման անհրաժեշտությունից»:

Վերը նշված դրույթի վերլուծությունից ուղղակիորեն բխում է, որ Հրավերում չեն կարող պարունակվել այնպիսի դրույթներ, որոնք կսահմանապակեն այս կամ այն մասնակցի մրցունակությունը, դրանք չեն կարող լինել խտրական և չեն կարող ներկայացնել հնարավոր մասնակիցներին ուղղված այնպիսի պահանջներ, որոնք կպարզեցնեն կամ կբարդացնեն գործընթացը, ինչպես նաև անուղղակիորեն կզրկեն ոլորտում առկա լիցենզավորված սուբյեկտներին գնման գործընթացին մասնակից լինելու իրավական հնարավորությունից:

Վերլուծելով Հրավերի պահանջները՝ տեսնում ենք ակնհայտ խտրական մոտեցում, մասնավորապես, Հրավերի Հավելված թիվ 1-ով սահմանված Տեխնիկական բնութագրի

գնման առարկայի անվանման դաշտում 8-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջներից ուղղակիորեն բխում է, որ դրանք «հարմարեցված են» ապահովագրական շուկայում գործող միայն մեկ հնարավոր թեկնածուի համար: Նշված պնդումն առավել պարզ ներկայացվում է ստորև բերված աղյուսակներով.

Աղյուսակ 1.

Ցուցանիշ՝ Մասնաճյուղերի առկայություն ՀՀ բոլոր մարզերում	«ՆաիրիԻնշուրանս» ԱՍՊԸ	«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	«Ինգո-Արմենիա» ԱՓԲԸ	«ՍԻԼ Ինշուրանս» ԱՍՊԸ	«ՌԵՍՈ» ԱՓԲԸ	«Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ
Մասնաճյուղերի քանակ՝[1]	1	20	6	1	0	1

Աղյուսակ 2.

հազարՀՀդրամ

N	Ցուցանիշներ[2]	Ցուցանիշների հանրագումար	Հանրագումարի 20%	Ռոսգոսստրախ Արմենիա	Ինգո Արմենիա	Նաիրի Ինշուրանս	Ռեսո	Սիլ Ինշուրանս	Արմենիաինշուրանս
1	Հաշվեգրված ապահովագրավճարներ	34,081,945	**6,816,389**	9,137,358	9,261,066	6,237,565	3,596,113	3,715,302	2,134,541
2	Ապահովագրական հատուցումներ	18,557,483	**3,711,497**	5,458,745	4,730,770	2,986,044	657,239	2,222,585	1,027,590
3	Սեփական կապիտալ	18,539,897	**3,707,979**	7,307,545	3,756,587	2,462,959	1,142,740	1,662,026	2,208,041
4	Ընդհանուր ակտիվներ	45,550,815	**9,110,163**	14,254,455	12,067,802	6,445,249	4,174,495	4,737,586	3,871,228
5	Կանոնադրական կապիտալ	13,098,260	**2,619,652**	3,983,000	2,536,260	1,290,000	2,350,000	1,971,000	968,000

Վերոնշյալ աղյուսակներում ներառված ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանց համապատասխանում է ապահովագրական ոլորտում լիցենզավորված 6 կազմակերպություններից միայն մեկ ապահովագրական ընկերություն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպություն/:

Ստացվում է, որ Հրավերն ի սկզբանե մշակվել է այնպիսի ձևաչափով, որպեսզի սահմանափակվի Հրավերի մասնակից ապահովագրական ընկերությունների մրցունակությունը և պարզեցվի համապատասխան մասնակցությունն ու ընթացակարգը՝

Կազմակերպության համար: Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3)ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Վերոնշյալից բխում է, որ Հրավերի դրույթները հակասում են նաև գնումների գործընթացի կազմակերպման հիմնարար սկզբունքներին:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-

րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, ղեկավարվելով վերոթվարկյալ իրավական հիմնավորումներով, խնդրում ենք պարտավորեցնել «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի» կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայության» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրովբաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթը հայտարարել չկայացած»:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում կայացած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Մանե Մարտիրոսյանը և Գևորգ Ոսկանյանը:

2. <u>«Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 16.03.2018թ. թիվ 22/08.1.6-271 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 12.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Սույնով «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) հայտնում է իր գրավոր անհամաձայնությունը Բողոքում բարձրացված դիրքորոշման կապակցությամբ, մասնավորապես.

1.Բողոքի 2-րդ կետի 4-րդ պարբերությամբ ամրագրված Բողոքաբերի դիրքորոշումը անհիմն է, քանի որ Պատվրատուի Հրավերի Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագրի գնման առարկայի անվանման դաշտում 8-րդ կետում նշված «Մասնաճյուղերի առկայություն բոլոր մարզերում» արտահայտությունը միտված է եղել նրան, որպեսզի դյուրին դարձվի Պատվիրատուի աշխատողների սպասարկումը ՀՀ ամբողջ տարածքում: Դա բխում է ինչպես Պատվիրատուի աշխատակիցներին արագ և պատշաճ մակարդակով ծառայությունների մատուցման անհրաժեշտությունից, այնպես էլ ապահովագրական գործունեությունը կանոնակարգող օրենսդրության պահանջներից: Մասնավորապես, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության

պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ ՀՀ-ում ԱՊՊԱ իրականացնելու իրավունք ունեն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետով նախատեսված դասով ապահովագրություն իրականացնելու իրավունք ունեցող, Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները, որոնք Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունեն մշտապես գործող առնվազն մեկ մասնաճյուղ կամ գործակալ և բավարարում են օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված պահանջները: Հաշվի առնելով, որ Հրավերով նախատեսված մրցույթի պոտենցիալ մասնակիցներն իրականացնում են ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործունեություն, ուստի Պատվիրատուն նախատեսել է այդ պայմանը, պարզապես նաշելով միայն «մասնաճյուղեր» տերմինը և կարևորություն չտալով «գործակալ» տերմինին, քանի որ մասնաճյուղ նշելով՝ նկատի է ունեցել ՀՀ ամբողջ տարածքում ընդհանրական ներկայացված լինելու հանգամանքը: Թյուրիմացությունից խուսափելու համար, Պատվիրատուն պատրաստ է համապատասխան փոփոխություն կատարել հրավերի վերոհիշյալ 8-րդ կետում, ավելացնելով նաև «կամ գործակալ» բառերը, որը հիմք չի տա բողոքաբերին ենթադրելու, որ Պատվիրատուն խտրական և մրցակցությունը սահմանափակող պահանջ է ներկայացրել, քանի որ բոլոր պոտենցիալ մասնակիցները զբաղվում են ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական գործունեությամբ և պարտավոր են ՀՀ բոլոր մարզերում ունենալ կամ մասնաճյուղ, կամ գործակալ:

2. Բողոքի 2-րդ աղյուսակում կատարված վերլուծությունը չի համապատասխանում Հրավերի Հավելված 1-ով Տեխնիկական բնութագրի գնման առարկայի անվանման դաշտում 12-րդ կետով սահմանված պահանջներին: Մասնավորապես, վերոհիշյալ 12-րդ կտով սահմանված է, որ մրցույթով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որակի չափանիշներին բավարարելու համար ապահովագրական ընկերության ներքոհիշյալ ցուցանիշները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2017թ. ֆինանսական տարվա համար) պետք է կազմեն ՀՀ բոլոր ապահովագրական ընկերությունների նշված ցուցանիշների հանրագումարի հիման վրա, այլ ոչ թե յուրաքանչյուր ցուցանիշի հանրագումարի հիման վրա: Բողոքում ամրագրված 2-րդ աղյուսակի ցուցանիշների համեմատությունից պարզ է դառնում, որ Հրավերի պահանջներին բավարարում են ՀՀ-ում գրանցված առնվազն 2 ապահովագրական ընկերություններ, սակայն բացառված չէ նաև ոչ ռեզիդենտ ցանկացած այլ ապահովագրական ընկերության հնարավոր մասնակցությունը: Հետևաբար, հրավերում ատոկա չէ մրցակցությունը սահմանափակող և խտրական որևէ պահանջ»:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Թամազյանը, Արմեն Ֆերոյանը և Դավիթ Մելիքսեթյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/39 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի 12.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), Պատվիրատուի 16.03.2018թ. թիվ 22/08.1.6-271 գրությամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 12.03.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ դիրքորոշումը.

Պատվիրատուն՝ «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը հայտարարել է համալսարանի աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ընթացակարգի Հրավերի մաս կազմող Պայմանագրի նախագծի Հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 8-րդ կետով՝ սահմանվել է հետևյալ պահանջը՝ «մասնաճյուղերի առկայություն ՀՀ բոլոր մարզերում», իսկ նույն տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 12-րդ կետով սահմանված լրացուցիչ պահանջների ցանկում նշվել են հետևյալ պահանջները՝

«Մրցույթով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ որակի չափանիշներին բավարարելու համար ապահովագրական ընկերության ներքոհիշյալ ցուցանիշները 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2017թ. ֆինանսական տարվա համար) պետք է կազմեն ՀՀ բոլոր ապահովագրական ընկերությունների նշված ցուցանիշների հանրագումարի առնվազն 20%-ը՝

1. հաշվեգրված ապահովագրավճարներ.
2. ապահովագրական հատուցումներ,
3. սեփական կապիտալ,
4. ընդհանուր ակտիվներ,
5. կանոնադրական կապիտալ»:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերի Պայմանագրի նախագծի 1-ին Հավելվածը հանդիսացող տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի վերը նշված կետերով սահմանված՝ մասնակիցներին առաջադրվող պայմանները խտրական են, հակասում են Օրենքի պահանջներին և անուղղակիորեն հանգեցնում Ընկերության շահերի ոտնահարմանը: Որպես հայտնաշ դիրքորոշման հիմնավորում Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ-ում ապահովագրական գործունեություն իրականացնող մի շարք Ընկերություններին վերաբերող՝ Հրավերով սահմանված ցուցանիշների վերլուծությունը, մասնավորապես, ՀՀ բոլոր մարզերում մասնաճյուղերի առկայությունը, ինչպես նաև 2017թ. ֆինանսական տարվա համար Ընկերությունների հաշվեգրված ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, սեփական կապիտալի, ընդհանուր ակտիվների և կանոնադրական կապիտալի ծավալները (գումարային արտահայտությամբ) արտացոլող ցուցանիշները: Արդյունքում, Ընկերությունը պարզել է, որ նշված ցուցանիշները համապատասխանում են ապահովագրական ոլորտում լիցենզավորված 6 կազմակերպություններից միայն մեկ ապահովագրական ընկերությանը, ինչից եզրակացրել է, որ Հրավերով նախատեսված նմանօրինակ պայմաններ առաջադրելով Պատվիրատուն նպատակ է ունեցել սահմանափակել Ընթացակարգի հնարավոր մասնակիցների մրցունակությունը՝ միևնույն ժամանակ պարզեցնելով մասնակցությունը տվյալ Ընկերության համար:

Բողոքի քննության նպատակով 16.03.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Բողոքի առարկա հանդիսացող՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում ներառված պայմանների առաջադրումը պամանավորված է ձեռք բերվող ծառայության որակի նկատմամբ հսկողության խստացման, ինչպես նաև Պատվիրատուի աշխատողների սպասարկումը ՀՀ ամբողջ տարածքում դյուրինացնելու անհրաժեշտությամբ: Պատվիրատուի ներկայացուցիչները թեև նշեցին, որ ՀՀ բոլոր մարզերում մասնաճյուղերի առկայության պահանջը բխում է ապահովագրական գործունեությունը կանոնակարգող օրենսդրության պահանջներից, սակայն պատրաստակամություն հայտնեցին համապատասխան փոփոխություն կատարելու հրավերի վերոհիշյալ 8-րդ կետում՝ ավելացնելով նաև «կամ գործակալ» բառերը, որը հիմք չի տա Բողոքաբերին նշված պահանջը խտրական և մրցակցությունը սահմանափակող համարել, քանի որ բոլոր հնարավոր մասնակիցները, որոնք զբաղվում են ապահովագրական գործունեությամբ, պարտավոր են ՀՀ բոլոր մարզերում ունենալ կամ մասնաճյուղ, կամ

գործակալ: Բողոքաբերը ընդունելի համարեց Պատվիրատուի ներկայացուցիչների կողմից առաջարկված Հրավերի փոփոխությունը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 8-րդ կետով սահմանված պահանջի մասով:

Ինչ վերաբերում է Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 12-րդ կետով սահմանված լրացուցիչ պահանջներին, ապա պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ նշված կետով առաջադրված պահանջը ուղղված է հնարավոր մասնակիցների «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատմանը, իսկ նշված չափանիշի գնահատման համար պահանջվող ցուցանիշների նմանօրինակ ձևակերպումը պարտադրված է կազմակերպված ընթացակարգի արդյունքում՝ համալսարանի աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայություններ մատուցող առավել վստահելի և փորձառու ընկերության ընտրության անհրաժեշտությամբ: Բացի այդ, Բողոքում ներկայացված՝ 12-րդ կետով սահմանված ցուցանիշների համեմատությունից Պատվիրատուն եզրակացրել է, որ Հրավերի պահանջներին բավարարում են ՀՀ-ում գրանցված առնվազն 2 ապահովագրական ընկերություններ, սակայն բացառված չէ նաև ոչ ռեզիդենտ ցանկացած այլ ապահովագրական ընկերության հնարավոր մասնակցությունը: Հետևաբար, ըստ Պատվիրատուի, Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 12-րդ կետում նույնպես առկա չէ մրցակցությունը սահմանափակող և խտրական որևէ պահանջ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը՝ անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին, իսկ 6-րդ կետի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին

մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը(...):

Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Բաց մրցույթի դեպքում փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում(...):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Կարգի 63-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Հանձնաժողովի 2018 թ. ապրիլի 9-ի թիվ 2 որոշմամբ փոփոխություն է կատարվել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերում, որով Բողոքի առարկա հանդիսացող Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 8-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջները Հանձնաժողովի կողմից փոփոխվել են և շարադրվել հետևյալ բովանդակությամբ.

8. Մասնաճյուղերի կամ գործակալների առկայություն ՀՀ բոլոր մարզերում:

12. Լրացուցիչ պահանջներ.

1.Մասնակիցը պետք է ունենա առնվազն 60 գործող պայմանագրեր Երևան քաղաքում, Հայաստանի առնվազն 9 մարզերում և ԼՂՀ-ում գտնվող օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված բուժհաստատությունների հետ, որոնցով սպասարկվում են առողջության կամավոր ապահովագրության պայմանագրի ներքո ապահովագրված անձինք եւ որոնցով ապահովագրված անձանց գծով վճարումները եւ փոխադարձ հաշվարկները իրականացվում են ապահովագրական ընկերության եւ բուժհաստատության միջև և ապահովագրված անձը ազատվում է անձամբ վճարում կատարելուց:

2.Ապահովագրական հատուցման հայտը առցանց գրանցելու հնարավորություն:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերում Պատվիրատուի կողմից կատարված փոփոխությունների արդյունքում Բողոքաբերի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանող և խտրական որակված՝ Հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 8-րդ և 12-րդ կետերով սահմանված պահանջները փոփոխվել են:

Խորհուրդը գտնում է, որ վերը նշված պայմաններում վերացել են նաև Բողոքի առարկա հանդիսացած փաստական հանգամանքները, ուստի «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-18/1» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 12.03.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ